Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4706

895 U
L - 30

2003

19

330/II

578

ՃԱՓՈՆԱԿԱՆ ՀԷՔԵԱԹ

ԼԵԶՈՒՆ ԿՏՐԱԾ ԾԻՏԻԿԸ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐՈՒՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.Հ. Публичная Библиотека
7/XI—1922
Имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՑՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

բարգմանութիւն

Электропеч. Н. Аганьянцъ, Тифл. Полицейская 7 ЛИТ. ЛЕВИТЪ ТИФЛИСЪ

5386

ԼԵԶՈՒՆ ԿՏՐԱԾ ԾԻՏԻԿԸ

Վաղուց պատահած բան է... Ասում են՝ մի չար պառաւ ուզում է ճերմակեղէնը օսլայի. մի քիչ օսլայ է դնում ամանի մէջ։

Հարևանի ձեռնասովոր ծիտը գնում է օսլան կտցահարում։ Պառաւը վրայ է հասնում։

—«Ա՛յ դու անպիտան արարած...» բարկանում է վրէն ու բռնում է լեզուն կտրում։

Ծիտիկը թռչում է գնում։ Հարևանուհին լսում է, որ իր սիրելի ծիտիկի լեզուն կտրել են։ Սաստիկ վշտանում է. վեր է կենում իր մարդու հետ ճամփայ է բռնում, սար ու ձոր ընկնում, որ իմանայ թէ ո՞ր կողմը թռաւ իր ծիտիկը։

Մարդ ու կնիկ գնում են ու ձէն տալիս։

—Ո՞ւրտեղ է լեզուն կտրած ծիտիկը։ Լեզուն կտրած ծիտիկը ո՞ւրտեղ է կենում։

Վերջապէս գտնում են ծի-
տիկի տունը։
Ծիտիկը որ
տեսնում է իր
հին տէրն ու

տիրուհին իրեն տես են եկել՝ ուրախանում, աշխարհքով մին է լինում։ Ներս է հրաւիրում, շնորհակալութիւն է անում առաջեան տեսած լաւութիւնների համար ու պատիւ է տալի։ Սեղան է բաց անում. էնքան ձուկն ու գինի է լցնում, որ էլ դատարկ տեղ չի մնում։ Կինը, որդիքն ու թոռներն էլ ոտի վրայ՝ ծառայում են։

Վերջը ինքն էլ բաժակը մի կողմն է շպրտում ու վեր կենում ծտապարի պար գալի։ Ու էսպէս ուրախ անց են

կացնում ամբողջ օրը։
Իրիկունը որ ընկ-
նում է՝ պառաւները
խօսք են բացա-
ւում, թէ ի-

բենց տուն գնալու ժամանակն է։ Էստեղ ծիտիկը գնում է երկու ուռի զամբիւղ է բերում։ Ասում է.

—Ա՛յ էս երկու զամբիւղը, մինը թեթև միւսը ծանր. որը կուզէք՝ ընտրեցէք ձեզ համար։

Հիւրերը թէ՝

—Մենք պառաւ մարդիկ ենք. բեր մեզ թեթեւը տուր, աւելի լաւ է՝ հեշտ կըտանենք. ծանրն ինչ ենք անում։

Առնում են թեթեւ զամբիւղն

ու վերադառնում տուն։

Տանը ասում են.

—Բեր մի բաց անենք, տես-
նենք ինչ կայ մէջը։

Բաց են անում—ինչ են
տեսնում, էլ ոսկի, էլ արծաթ,
էլ անգին քար, էլ թոփերով
մետաքսեղէն... էն տեսակ մի
բան, որ իրենց օրում իսկի
մտքներովն էլ չեն անցկացրել։
Քանի հանում են, էնքան ա-
ւելի շատ է մնում մէջը։

Անվերջ-անհատնում։

Ու միանգամից հարստա-
նում են։

Էս բանը լսում է ծիտիկի լեզուն կտրող չար պառաւը։ Նախանձում է հարևանների բախտին։ Հարց ու փորձ է անում թէ որտեղ է կենում լեզուն կտրած ծիտիկը. տեղն ու ճամփէն սովորում է։

—Ես էլ կերթամ ծիտիկի մօտ. ասում է ու ճամփայ ընկնում։ Գնում է գտնում։ Դարձեալ ծիտիկը երկու զամբիւղ է բերում ու ասում.

—Ահա երկու զամբիւղ, մինը ծանր, միւսը թեթև, որն ուզում ես ջոկի քեզ համար։

Պառաւը միտք է անում՝ որ միջի գանձն ինչքան շատ լինի՝ զամբիւղն էլ էնքան ծանր կլինի. ասում է—բեր ծանր զամբիւղը տուր ինձ։

1002/5544

Շալակում է ծանր զամ-
բիւղն ու ճամփայ ընկնում
դէպի տուն։

Զամբիւղը քարի պէս ծանր
է լինում—տանելը դժար։ Տըն-
քալով տանում է։

Ծիտիկները ետևից մտիկ են անում ու ծիծաղում։

Տանում է տուն։ Տանում է, ագահ-ագահ բաց է անում։

Բաց է անում թէ չէ՝ աղ-մուկով դուրս են թափում այլանդակ—անճոռնի չար ոգիները—տեղն ու տեղը խեղդում չար պառաւին։

7/XI—1922
имени Л. Маяковского

ՄԱՆԿԱՆՑ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 14

ՀՐԱՏ.

ԻՇԽ. ԹՈՒՄԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

40 ԿՈՊ.

4706

Ա008314

2013